

ԽՍՀՄ ՄԱՏԺՈՂԿՈՄԱՏ

ԾԽԱԽՈՏԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾԱԿԱՆ  
ՓՈՐՁԱԿԱՅԱՆ

ԾԽԱԽՈՏԻ ԽՆԱՄՔԸ  
ԴԱՇՏՈՒՄ

ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾԻ  
ԹԵՐԹԻԿ № 7

633  
ժ-64

ՅԵՐԵՎԱՆ

1933 թ.

2678  
38

14 MAY 2013

18376

633

5-64 *uy*

04 AUG 2010

ԳՅՈՒՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՏԻՐԱԺ 1000
ԳԼԱՎԼԻՏ 8503
ՊԱՏՎԵՐ 93

**ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՓՈՐՁԻ ՀԻՄԱՆ  
ՎՐԱ ԵՒ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ**

Յերկրորդ հնգամյակի ընթացքում գյուղատնտեսության վերակառուցումը վորպես կարեվորագույն խնդիրներ առաջադրում է մեզ մեր դաշտերի բերքատվության բարձրացման հետ միասին բարելավել հումքի վորակը և աշխատանքը կազմակերպել ճիշտ Ընկեր Ստալինի պատմական 6 ցուցումների հիման վրա Այս խնդիրները բացառիկ նշանակություն են ստանում սոցիալիստական ծխախոտագործության մեջ, ուր վերջին ժամանակներս ագրոտեխնիկայի կանոնների անփույթ կատարման ու կոպիտ խախտումների հետեվանքով բերքատվությունն ու ծխախոտի վորակը մնում էր անթույլատրելի ցածր մակարդակի վրա Դրա համար էլ ագրոնոմական բոլոր ձեվերի ու գիտական նվաճումների ոգտագործումը պիտի վճռական պայման հանդիսանան Հայաստանի ծխախոտագործության բերքատվության ու ծխախոտի վորակի բարձրացման գործում: Ծխախոտի կուլտուրայի տեխնիկայի մեջ ամենագլխավոր մոմենտներից մեկը ծխախոտի խնամքն է դաշտում, վորի հաշոդ կատարումն ապահովում է մեր արդյունաբերությունն ու արտահանումը մեծ քանակով ու բարձր վորակի ծխախոտով:

5848

**ՊԱՅԲԱՐԸ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԵՍ ԵՎ ՉՈՂԻ ՓԻՐԱՑՈՒՄԸ**

Ծխախոտը դաշտային մյուս բոլոր կուլտուրաների հետ համեմատած իր աճման ու դարգացման ընթացքում խնամքի ավելի մեծ կարիք է զգում: Ծխախոտի դաշտը, շիթիլի տնեկիլու ժամանակից սկսած, պետք է բոլորովին մաքուր լինի մոլախոտերից, վորովհետև արագորեն աճող մոլախոտերը յերեվալով ծխախոտ տնեկիլուց անմիջապես հետո, խանգարում են դեռևս արմատներ չզցած շիթիլի նորմալ աճումը և դրա հետ միասին հյուժում են հողը խելով նրանից ծխախոտի շիթիլին անհրաժեշտ խոնավությունը: Բացի այդ, մոլախոտերն ամեն տեսակի հիվանդությունների ու ծխախոտի վնասատուների տարածման պատճառ են

հանդիսանում: Դրա համար ել միշտ, իր ժամանակին պիտի պայ-  
քար մղել մոլախոտերի դեմ: Պետք է հիշել, վոր վորքան շուտ  
սկսենք վոչնչացնել մոլախոտերը, այնքան հեշտ ու արագ կկա-  
տարվի այդ աշխատանքը և այնքան քիչ վնաս կտրելի յե սպա-  
սել նրանցից:

Ծխախոտի տնկարանը ձեռքի թորխիով (թաքուճակով) կամ  
ձիու կուլտիվատորով մոլախոտերից մաքրելը կապված է մի ուրիշ  
պրոցեսի կատարումից. այդ հողի վերին շերտի փխրացումն է,  
վորի շնորհիվ հողի մեջ խոնավությունն ավելի լավ է մնում, նրա  
յերեսը չի կեղևակալում, ուստի և բույսի արմատները կարողա-  
նում են իրենց համար անհրաժեշտ քանակությամբ ող ստանալ:  
Այսպիսով միջ-շարքային աշխատանքներն իր ժամանակին կա-  
տարելու վրա պետք է շատ լուրջ ուշադրություն դարձնել, վո-  
րովհետև, վորքան ավելի ուշացվի քաղհանը, այնքան ավելի դժ-  
վար ու թանգ կնստի այդ աշխատանքը և, վոր գլխավորն է, այն-  
քան ավելի ցածր կլինի ծխախոտի բերքատվությունը և վատ  
կլինի վորակը: Նկատի ունենալով այս ամենը, չափազանց կա-  
րելի է, վոր չուշանա առաջին քաղհանը, վոր պետք է կատա-  
րել շիթիլը տնկելուց ամենաուշը 10—12 որ հետո, և վորի համար  
անհրաժեշտ կլինի համապատասխան քանակով բանվորական ուժ,  
նայած դաշտի անմաքրության աստիճանին:

Յերկրորդ քաղհանի հետ միասին պետք է կատարել նաև շի-  
թիլի բուկը ցրելու աշխատանքը, վորը նրան հնարավորություն  
է տալիս ավելի լավ զարդանալու և արմատային սիստեմն ամ-  
բապնդելու, մի հանդամանք, վոր առանձնապես կարևոր է Հա-  
յաստանի հաճախակի քամիներին դիմանալու համար: Բուկ տա-  
լու աշխատանքը ևս չպետք է ուշացնել, վորովհետև ծխախոտի  
մատղաշ բույսերն ավելի հեշտ են նոր արմատներ գցում հավաք-  
ված հողի մեջ, քան թե հին բույսերը: Բուկ տալ պետք է վո-  
րոշ չափով արդեն մեծացած ծխախոտի բույսին, ուստի այդ աշ-  
խատանքը պետք է կատարել առաջին քաղհանից 10—15 որ հե-  
տո: Մեծ մասամբ յերկրորդ քաղհանով ու բուկ տալով ել վերջա-  
նում է ծխախոտի միջ-շարքային մշակությունը, սակայն վորոշ  
դեպքերում—մոլախոտերով վարակված հողերում և անբարենը-  
պաստ ամառները կարող է անհրաժեշտություն զգացվել յերրորդ  
անգամ ևս քաղհանելու:

Այսպիսի մի աշխատանք կլանող պրոցես, ինչպիսին ծխա-  
խոտի քաղհանն է, տնտեսությունից շատ բանվորական ուժ է

խլում, ուստի և շատ տեղին ու ժամանակին է այդ աշխատանքի  
մեքենայացման հարցը դնել:

Քաղհանը ծխախոտի մշակության այն պրոցեսներից մեկն  
է, վոր ամենից հեշտ է մեքենայացման յենթարկել: Մյուս շար-  
քահերկ կուլտուրաների որինակը ցույց է տալիս, վոր միջ-շար-  
քային մշակության աշխատանքը շատ հեշտ է մեքենայացման  
յենթարկել: Ճիշտ է, ծխախոտի միջ-շարքային մշակությունը վո-  
րոշ չափով բարդանում է նրանով, վոր առաջին քաղհանի ժա-  
մանակ ծխախոտի բույսը շատ փոքր ու քնքուշ է լինում, իսկ  
յերկրորդ քաղհանի ժամանակ արդեն զարգացած տերևները կա-  
րող են վնասվել, մյուս կողմից ձեվով միջ-շարքային մշակություն  
կատարելու համար բավական յերկար աղոսներ են պահանջվում,  
վոր ամեն անգամ ել հնարավոր չի լինում ծխախոտի ջրովի մը-  
շակության պայմաններում: Սակայն այդ հանգամանքներն այն-  
քան անուղղելի չեն, վոր հնարավոր չլինի ձիու կուլտիվացիա  
կատարել ծխախոտի դաշտում: Գործադրելով ծխախոտի հատուկ  
քաղհանիչներ և աշխատանքը կատարելով հատուկ խնամքով ու  
հոգատարությամբ, լիովին հնարավոր է ծխախոտի առաջին ու  
յերկրորդ քաղհանը կատարել ձիու ուժով: Մշակության այդպիսի  
ձևը զգալի չափով կրճատում է ձեռքի աշխատանքի գործադրումը:  
Այնուամենայնիվ, ձիով մշակելու դեպքում ել չի բացավում  
նաև ձեռքի մշակությունը շարքերի միջև և աղոսների հարդա-  
րումը: Կորտեստեսություններում, ուր յուրաքանչյուր բրիգադին  
կցվում է վորոշ հողամաս, ծխախոտի քաղհանի աշխատանքները  
կատարելու համար արտադրանքի նորմաներ սահմանելիս պետք է  
նկատի ունենալ հողի պայմանները (ամրություն, թեթևություն)  
և մոլախոտերով վարակված լինելու աստիճանը:

**ԾԽԱԽՈՏԻ ՎՈՌՈԳՈՒՄԸ**

Հայաստանում ծխախոտագործության առանձնատեսակու-  
թյունն է հանդիսանում այն, վոր այստեղ, կլիմայական պայման-  
ներից յերկրով կիրառվում է ծխախոտի վոռոգելով մշակելու  
ձեվը: Սակայն մեր ծխախոտագործների մեջ տարածված սխախե-  
րից մեկն այն է, վոր նրանք ի չարն են գործադրում վոռոգումը:  
Պետք է նկատի ունենալ, վոր ծխախոտը չափից ավելի վոռոգելը  
վոչ միայն չի ավելացնում նրա բերքատվությունը, այլ և վա-  
տացնում է վորակը, վորովհետև շատ ջրված ծխախոտի թուփը

լինում ե նուրբ, խոնավությունը շուտ ե դուրս թողնում ե տա-  
լիս ե թույլ տերևներ:

Ծխախոտը պետք ե ջրել այն ժամանակ, յերբ նա զգում ե  
դրա պահանջը, այսինքն յերբ հողը բավական չորացել ե, իսկ  
ծխախոտի տերևները մի քիչ թառամած են լինում վոչ միայն  
ցերեկը, այլ ե առավոտները: Ջրի կարիք չզգացող ծխախոտն ա-  
ռավոտը լինում ե թարմ ու պարարտ:

Ավելի լավ ե ծխախոտը ջրել յերեկոյան կամ նույնիսկ գի-  
շերը, վորպեսզի հողը հնարավորություն ունենա ամբողջ խոնա-  
վությունն իր մեջ ծծելու: Ծող ժամանակ ծխախոտը չպիտի ջրել,  
վորովհետեւ այդ դեպքում խոնավության խոշոր մասը գորտըշիա-  
նում, կորչում ե ե դրա հետ միասին նպաստավոր պայմաններ  
են ստեղծում թե դանազան սնկային հիվանդությունների ե թե  
ծխախոտի վնասատուների տարածման համար: Ջրելու վրա զըլ-  
խավոր ունադրությունը պիտի դարձնել ծխախոտի աճման ըն-  
թացքում, մինչև ծաղիկն սկսելը, յերբ ծխախոտն ամենից ուժեղ  
ե դարգանում:

Պետք ե ասել նաև, վոր ծխախոտի քաղհանը պետք ե կա-  
տարել նախապես ջրելուց հետո, վորպեսզի վոչնչանա առաջացած  
կեղևը ե հողն ընդունակություն ունենա իր մեջ ավելի շատ խո-  
նավություն պահելու:

### ԾԽԱԽՈՏԻ ԾԱՂԿԱՏՈՒՄՆ ՈՒ ԲՃԱՏՈՒՄԸ

Ծխախոտի դաշտային խնամքի աշխատանքներից մեկն ել նրա  
ծաղկատումն ու բճատումն ե: Հայանի յե, վոր ծխախոտը մշակ-  
վում ե նրանից տերևներ ստանալու համար: Յերք ծխախոտը ծաղ-  
կում ե ե ճյուղեր ե տալիս, նրա տերևների մեջ յեղած սննդարար  
նյութերը պահասում են, վորովհետեւ այդ նյութերը ծախսվում են  
ծաղիկների ու սերմ առաջացնելու վրա: Սրա հետևանքով ել յե-  
թե ծխախոտի թուփը չի ծաղկատվում ե չի բճատվում, նա ավելի  
քիչ տերևների բերք ե տալիս: Մինչդեռ ծաղկատված ու բճատ-  
ված ծխախոտի բույսը կարողանում ե ավելի շատ սնունդ տրա-  
մադրել իր տերևներին, վորի նորհիվ տերևներն ավելի լավ են  
զարգանում, ստացվում ե ավելի բարձր բերք ե այդ աշխատանք-  
ները ճիշտ կատարելու դեպքում լավանում ե նաև բերքի վորակը:  
Սակայն այստեղ պիտի ասել, վոր ուժեղ հողերում շատ վաղ ել  
չպետք ե կատարել ծխախոտի ծաղկատումն ու բճատումը, այ-  
սինքն չպետք ե կատարել այն ժամանակ, յեր նոր ե միայն յե-  
րեկացել ծաղիկ տվող գլուխը ե ճյուղերը դեռ մատղաշ են, վորք:  
Սյուպես վաղ ծաղկատելու ե բճատելու դեպքում, թեև բերքը վո-

րոշ չափով կավելանա, սակայն ծխախոտի վորակը վատ կլինի:  
Մինչդեռ, յեթե նույն ուժեղ հողերում ուշ ե ծաղկատվում, այ-  
սինքն այն ժամանակ, յերբ ծխախոտն արդեն սերմ ե տալիս,  
ինչպես ե յեթե կտրատվում են միայն խոշոր բճերը, այդ դեպ-  
քում, ճիշտ ե, մի քիչ պակաս բերք ե ստացվում, քան առաջին  
դեպքում, սակայն բերքի վորակը լավ ե լինում, վորովհետեւ ծխա-  
խոտի վորակը փչացնող աղոտային նյութերը ծախսվում են մա-  
տաղ ճյուղերի ե ծաղիկող որգանների առաջացման ու աճման վրա:  
Նշանակում ե, այս ձևերի կիրառումով մենք կարող ենք կարգավո-  
րել ծխախոտի բավարար բերք ստանալու ե նրա վորակը բարձ-  
րացնելու գործը նկատի առնելով նրա աճման պայմանները:  
Բճատումը կարելի յե ունայնել ե ընդհակառակն, աղքատ ե թույլ  
հողերում այդ աշխատանքները պիտի սկսել լիակատար ծաղկու-  
մից ել առաջ ե ծխախոտի թփի գլուխը կտրելիս այնքան ցածրից  
պիտի կտրել, վոր պոկվեն նաև վերին 2—3 տերևները, վորպեսզի  
մնացած տեղիները հնարավորություն ստանան ավելի լավ զար-  
գանալու: Ավելի վաղ ու խոր ծաղկատում կատարել հարկավոր ե  
նաև այն դեպքում, յեթե ամառը չոր ե: Քանի վոր ծաղկատումն  
ու բճատումն արագացնում են ծխախոտի տերևների հասունա-  
ցումը, ապա ուրեմն, յեթե ունենք ուշ անկված ծխախոտ ե վտանգ  
կա, թե նրա վերին տերևները չեն հասունանա մինչև ցրտերն  
ընկնելը, այդ դեպքում ես ծաղկատման ու բճատման աշխատանք-  
ները պիտի սկսել շուտ ե պիտի ծաղկատել ավելի խորը:

Ծաղկատումը պիտի կատարել 2 անգամ. առաջին ծաղկա-  
տումը կատարվում ե այն ժամանակ, յերբ ծաղիկ ե ծխախոտի  
թփերի մեծ մասը, իսկ յերկրորդը կատարվում ե այն ժամանակ,  
յերբ արդեն ծաղիկ են մնացած թփերը ես:

Բճատումը պետք ե կատարել այն ժամանակ, յերբ ճյուղեր  
են առաջացել, սակայն այս ես պիտի կատարել առնվազն 2 ան-  
գամ, թույլ չտալով, վոր բճերը 10 սմ-ից ավելի յերկարեն: Յեթե  
ծաղկատումը շուտ ե կատարվում, այդ դեպքում բլիբը ես պիտի  
շուտ պոկոտվեն, յերբ դեռ 6—8 սանտիմետր յերկարություն ունեն:

Ջրովի ծխախոտաղործության պայմաններում ծխախոտի  
թփի բճերն աճում են բավական արագ, մասնավաճ ծաղկատված  
թփերի վրա, դրա համար ել բճատումը չպետք ե ունայնել, միշտ  
հիշելով, վոր այդ աշխատանքները ժամանակին ու ճշտորեն կատա-  
րելն ապահովում ե ծխախոտի բերքի բարձրացումն ու վորակի  
լավացումը:

Սովորաբար ծաղկատունն ու բճատումը կատարվում է ձեռքով, սակայն, յեթե բճերն ու ու ծաղիկը շատ են մնացել թփի վրա, ամրացել են և ձեռքով կտրելը դժվար է, կաբելի յե գործադրել այգու մկրատ, վորով անխատանքը կատարվում է արագ ու վորակով:

Յերկրորդ հնգամյակի կենտրոնական խնդիրը պիտի դառնա կոլտնտեսական, խորհտնտեսական դաշտերի բերքատվության վճռական բարձրացումը և յերաշտի դեմ պայքարելու հարցի բայլև վիկյան լուծումը:

2678  
38

